ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 2-ին, կիրակի.- Ե. կիր. Քառասնորդական Պահոց (Դպրաւորին):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը քարոզ խոսեց՝ «Պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս եւ մի ձանձրանալ» (Ղուկ. ԺԸ 1) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ապրիլի 4-ին, երեքշաբթի.- Լ. օր Մեծի Պահոց:

Այսօր, առավոտյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Հայոց Հայրապետ Խրիմյան Հայրիկի շիրիմի առջև, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Հայոց 125-րդ Կաթողիկոսի ծննդյան 180-րդ տարեդարձի:

Հավարտ արարողության Վեհափառ Հայրապետը տապանաքարը ցողեց հայրենի քաղաքից բերված մի սրվակ ջրով, որ Մայր Աթոռ էին բերել «Վասպուրական» հայրենակցական միության անդամները:

Հայրապետի հիշատակին իրենց հարգանքի տուրքը մատուցելու էին եկել նաև բազմաթիվ հայորդիք՝ ի հաստատումն այն մեծ գնահատանքի, որին Հայոց Կաթողիկոսն արժանացել էր դեռևս իր կենդանության օրոք՝ ստանալով «Հայրիկ» անունը:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Կանադայի արտակարգ և լիազոր դեսպան Ռոդնի Իրվինին (նստավայրը՝ Մոսկվա):

Ապրիլի 7-ին, ուրբաթ.- Լ Գ. օր Մեծի Պահոց: Աւետումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարա-

գիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ապրիլի 8-ին, շաբաթ.- ԼԴ. օր Մեծի Պահոց: Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սուսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցեց Մայր Աթոռի միաբան, նորաօծ Տ. Ղուկաս աբեղա Ջաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացի զիս աջ իմ» (Սաղմ. ճԼՁ 5) բնաբանով:

Ապրիլի 9-ին, կիրակի.- Զ. կիր. Քառասնորդական Պահոց (Գալըստեան):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Ներսեհ աբեղա Խալաթյանը:

Ապրիլի 11-ին, երեքշաբթի.- ԼԷ. օր Մեծի Պահոց:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵԱՀԿ Հայաստանի գրասենյակի պատվիրակությանը՝ տնօրեն Ռոյ Ռիվի գլխավորությամբ:

Ապրիլի 16-ին, կիրակի.- Ծաղկազարդ: Պահք:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Օրհնեալ որ գայդ յանուն Տեառն» (Հովհ. ԺԲ 13) բնաբանով:

Երեկոյան ժամերգությունից հետո Մայր Տաճարում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, տեղի ունեցավ Դոնբացեքի արարողություն:

Ապրիլի 19-ին, Ավագ չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Ազգային Ժողովի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներին՝ խմբի նախագահ Ժան Պոլ Բրեկի գլխավորությամբ: Պատվիրակությանն ուղեկցում էր Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրան:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանի հանդիսությունների դահլիճում ընդունեց պոլսահայ ավելի քան 200 ուխտավորների:

Ուխտավորների թվում էին նաև Կ. Պոլսի Ս. Երից Մանկանց հայոց եկեղեցու «Սայաթ Նովա» երգչախմբի անդամները, որոնք Ս. Հարության փոնին Բջնիի եկեղեցում կատարեցին Պատարագի երգեցողությունը:

Ապրիլի 20-ին, Աւագ հինգշաբթի.- Պահք: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, առավոտյան, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը ընթերցեց Ս. Բարսեղ Հայրապետի խոսքը:

Եռմիջօրեին, երեկոյան ժամերգությունից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց Ոտնլվայի կարգը:

Ուշ երեկոյան Մայր Տաճարում կատարվեց Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Մատնության, Չարչարանքների և Խաչելության հիշատակության կարգը: Խորա-խորհուրդ այդ մթնոլորտում օրվա խորհուրդը մեկնաբանող քարոզ խոսեց Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը:

Ապրիլի 21-ին, Աւագ ուրբաթ.- Պահք: Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, կեսօրին, ժամը 12.30-ին, Մայր Տաճարում կատարվեց Խաչելության կարգը:

Երեկոյան ժամը 17.30-ին կատարվեց Թաղման կարգը: Տիրոջ խորհրդանշական գերեզմանը առջևում բռնած, «Պարգեւատուն ամենեցուն» շարականի երգեցողությամբ, Մայր Աթոռի միաբաններից, ուսանողներից և հավատացյալներից կազմված թափորը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, պտտվեց Մայր Տաճարի շուրջը:

Ապրիլի 22-ին, Աւագ շաբաթ.- Պահք: Ճրագալոյց Զատկի:

Այսօր, երեկոյան, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզմիկ եպս. Պետրոսյանը:

Երեկոյան ժամերգության ավարտին չորս սարկավագներ ընթերցեցին Դանիելի թուղթը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Եւ էր գիշէր» (Հովհ. ԺԳ 30) բնաբանով:

Ս. Պատարագից հետո միաբանական թափորն ուղղվեց դեպի Վեհարան, որտեղ, Տնօրինեքի արարողություն կատարելուց հետո, միաբանները Ս. Հարության փոնի առիթով շնորհավորեցին Վեհափառ Հայրապետին:

Այնուհետև միաբաններն ու Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանողները շարժվեցին միաբանական սեղանատուն՝ նշելու Տիրոջ Հրաշափառ Հարության փոնը:

Սիրո ճաշը եզրափակվեց Վեհափառ Հայրապետի խոսքով:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայոց մեծ ցեղասպանության 85-ամյակի ոգեկոչման արարողություններին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած Շվեդիայի խորհրդարանականներ Մուրադ Արթինին և Հանս Արվիդսենին, Հունաստանի ազգային հերոս Մանոլիս Գլեզոսին:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայոց մեծ զորավար Դրասդամատ Կանայանի՝ Դրոյի հարազատներին: Զորավարի որդին՝ ամերիկահայ Մարտին Կանայանը, Վեհափառ Հայրապետին ներկայացրեց հոր՝ Դրասդամատ Կանայանի աճյունը Հայաստան տեղափոխելու և մայր հողին հանձնելու ծրագրի մանրամասները:

Ապրիլի 23-ին, կիրակի.- ՋԱՏԻԿ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը քարոզ խոսեց՝ «Փա՛ռք Քրիստոսի ամենազօր Յարութեան» բնաբանով (տե՛ս էջ 3):

Ս. Պատարագի վերջում կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Ազգային Ժողովի պատգամավորներ, նախարարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, հավատացյալների հոծ բազմություն:

Հավարտ Սուրբ Պատարագի Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, ուր հրավիրվածները շնորհավորեցին Վեհափառ Հայրապետին Քրիստոսի Հարության տոնի առիթով:

Ապրիլի 24-ին, երկուշաբթի.- Բ. օր Զատկի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Ս. Պատարագի ավարտին Հայոց մեծ եղեռնի հիշատակի օրվան նվիրված քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Զի յաղթեցէք դուք չարին» (Ա Հովհ. Բ 13) բնաբանով: Քարոզից հետո Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի մոտ կատարվեց հոգեհանգիստ՝ վասն համորեն ննջեցելոց:

Ապրիլի 25-ին, երեքշաբթի.- Գ. օր Զատկի:

Այսօր Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վալանսի փոխքաղաքապետ Ժան Մարկ Աբատյուին և մի խումբ վալանսցիների: Վալանսցի հյուրերը Հայոց ցեղասպանության 85-ամյա տարելիցի առիթով իրենց մասնակցությունը բերելով վալանսաբնակ Էդուարդ Չոկակլյանի նախաձեռնությամբ Իջևանից մինչև Ծիծեռնակաբերդ ձգված «Սարգիսի ճանապարհ» կոչվող յուրօրինակ երթին, ոգեկոչեցին Մեծ եղեռնի զոհերի հիշատակը:

Ապրիլի 27-ին, հինգշաբթի.- Ե. օր Զատկի:

Այսօր Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հեսենի երկրամասի պատվիրակությանը՝ Հեսենի պառլամենտի պատգամավոր Հիլդեգարդ Քլերի գլխավորությամբ:

Նույն օրը Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միացյալ Մեթոդիստ Եկեղեցու UMCOR բարեգործական կազմակերպության գլխավոր քարտուղարի տեղակալ Փոլ Դիրդակին և Հայաստանում UMCOR-ի գրասենյակի պատասխանատու Թերի Ուոլենին:

Ապրիլի 28-ին, ուրբաթ.- Զ. օր Զատկի:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ Հելլե Դայնին՝ ՀՀ ԱԺ փոխխոսնակ Գագիկ Ասլանյանի և Հայաստանում ԵԱՀԿ գրասենյակի տնօրեն Ռոյ Ռիվի ուղեկցությամբ:

Ապրիլի 30-ին, կիրակի.- Ը. օր Զատկի: Կրկնազատիկ (Նոր Կիրակէ):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նորա» (Հովհ. Ա 14) բնաբանով: